

## Արձանագրություն N1

### 2018 թվականի օգոստոսի 3-ին ժամը 10:00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

1. «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» և «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ների կողմից ներկայացված՝ միասնական հաշվի վարման դադարեցման հետ կապված հարցը որոշվեց քննարկել առաջիկա նիստի ընթացքում:

2. «Համագործակցության նոր ուղի-կիրթ գործարար» ՀԿ-ի կողմից ներկայացվեց չդրոշմավորված ապրանքներ ունեցող հարկ վճարողներին այդ ապրանքները որոշակի ժամկետում դրոշմավորելու հնարավորություն տալու հարցը: Ծավալված քննարկումների արդյունքում որոշվեց՝ արտադրող կամ ներմուծող չհանդիսացող հարկ վճարողներին հնարավորություն տալ այդ ապրանքները դրոշմավորելու համար: Տեղեկացվեց նաև, որ ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ ներմուծված ապրանքները չեն կարող դրոշմավորվել:

Քննարկվեց նաև արտադրող կամ ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների մոտ չդրոշմավորված ապրանքներ հայտնաբերելու դեպքում պատասխանատվության կիրառման հարցը, որի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ռ. Մաշադյանը հայտնեց, որ նման խախտումներ գրեթե չեն արձանագրվել:

3. «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի կողմից ներկայացվեց ՀԴՄ կտրոններում ապրանքների անվանացանկի և առևտրային զեղչի վերաբերյալ տեղեկատվության բացակայության համար սահմանված պատասխանատվության վերանայման հարցը: Վերջինիս կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ռ. Մաշադյանը հայտնեց, որ եղել են մի շարք դեպքեր, երբ նշված հիմքով պատասխանատվության ենթարկված հարկ վճարողները դիմել են բողոքարկման հանձնաժողով, որի արդյունքում նրանց բողոքը բավարարվել է:

Միաժամանակ, քննարկվեց նաև ՀԴՄ կտրոնի վրա պարտադիր տպագրվող տեղեկատվության ցանկից ապրանքների անվանացանկի, ինչպես նաև առևտրային զեղչի հանման հարցը, որի առնչությամբ պարոն Մաշադյանը հայտնեց, որ ՀԴՄ կտրոնում ապրանքների անվանացանկը չտպագրելը, հատկապես խոշոր հարկ

վճարողների պարագայում, կարող է ռիսկային լինել, իսկ առևտրային գեղջի հարցը որոշվեց քննարկել աշխատանքային կարգով:

4. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչը ներկայացրեց հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փոխկապակցվածության հիմքով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու դրույթի վերանայման հարցը: ՀՀ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ռ. Մաշադյանը հայտնեց, որ ըստ նրա՝ առկա ռիսկերը մեղմող կարգավորումների դեպքում, այդ դրույթը պետք է ճանաչել ուժը կորցրած: Հասարակական խորհրդի նախագահ Փ. Թադևոսյանը առաջարկեց այն վերաշարադրել և սահմանել, որ փոխկապակցվածության հիմքով շրջանառության հարկ վճարողները կդադարեն այդպիսին համարվելուց, եթե փոխկապակցված ճանաչված հարկ վճարողների նախորդ կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցի շրջանառության հարկի շեմը: Այս տեսակետին համակարծիք էր նաև Գագիկ Պողոսյանը:

Արդյունքում՝ խորհուրդը որոշեց, որ սույն հարցն առավել նպատակահարմար է քննարկել ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության կատարելագործման ընդլայնված խորհրդի նիստի շրջանակներում:

5. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչը ներկայացրեց փոքրաքանակ ապրանքների տեղափոխման փաստաթղթավորման հետ կապված խնդիրները: Առաջարկվեց կատարել բացառություն և որոշակի դեպքերում թույլատրել ապրանքների տեղափոխումն իրականացնել առանց փաստաթղթավորման:

Արդյունքում, խորհուրդը՝ հաշվի առնելով ներկայացված խնդիրների մանրամասն ուսումնասիրության անհրաժեշտությունը, որոշեց սույն հարցը, ինչպես նաև՝ ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ից դուրս ձեռք բերվող ապրանքների փաստաթղթավորման հետ կապված հարցերը քննարկել առաջիկա նիստի ընթացքում: Միաժամանակ, խորհրդի նախագահի կողմից խորհրդի անդամներին առաջարկվեց վերոնշյալի մասով առկա բոլոր խնդիրները առավել մանրամասն ներկայացնել խորհրդի քարտուղարությանը:

6. Հաշվապահական հաշվառման տվյալները ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց ներկայացնելու ժամկետի վերաբերյալ հարցը ներկայացվեց ՀՀ բանկերի միության ներկայացուցչի կողմից: Վերջինս հայտնեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկային ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց գրավոր պահանջով դրան հաջորդող աշխատանքային օրը նույն հոդվածով սահմանված՝ հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենը (ստուգման հանձնարարականով ընգրկվող ժամանակահատվածի մասով) ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով չտրամադրելու դեպքում գանձվում է տուգանք, այնինչ ՀՀ կառավարության 10.08.2017թ.-ի N 961-Ն որոշմամբ հաստատված՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների կամ ներդրումային ընկերությունների կողմից հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենն ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պահանջվելու և էլեկտրոնային կրիչով նշյալ պաշտոնատար անձանց տրամադրվելու» կարգի և պայմանների 7-րդ կետի համաձայն՝ վերոնշյալ տեղեկատվությունը տրամադրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում: Նշվածի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Բադասյանը հայտնեց, որ հարցը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է, այնուամենայնիվ որոշվեց՝ անհարկի տարրնկալումներից խուսափելու նպատակով կատարել համապատասխան փոփոխություն:

7. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչը բարձրացրեց հարկ վճարողների՝ ՀԴՄ կտրոններում գնորդ կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի ՀՎՀՀ-ն մուտքագրելու հնարավորությամբ հսկիչ դրամարկղային մեքենաներ չունենալու հարցը: Խորհրդի անդամները նշեցին, որ տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասը չգիտեն ինչպես ՀԴՄ-ներն ապահովել համապատասխան ծրագրավորմամբ՝ գնորդների ՀՎՀՀ-ն ՀԴՄ կտրոնում արտացոլելու համար: Սույն խնդրի կարգավորման նպատակով՝ Խորհրդի անդամների առաջարկով որոշվեց հարկ վճարողներին իրազեկել նշված ծրագրային ապահովումն իրականացնող անձանց և համապատասխան

ընթացակարգերի վերաբերյալ: Միաժամանակ, Խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ պարզելու համար, թե քանի տնտեսավարող սուբյեկտ ունի ՀԴՄ կտրոնի վրա գնորդի ՀՎՀՀ-ն մուտքագրելու հնարավորություն, որոշվեց կատարել համապատասխան վերլուծություն, որի արդյունքները կամփոփվեն առաջիկա նիստի ընթացքում: